Հարթաշեն գյուղ

Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 79 կմ,
Հեռավորությունը Գորիս քաղաքից՝ 14 կմ,
Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1350 մ,
Կարգավիճակը՝ սահմանամերձ։
Հարթաշենը հիմնադրվել և կառուցվել է 1965-70 ական թվականներին՝ Այգեձոր, Ազատաշեն և Ջորաշեն գյուղերի բնակիչների կողմից։ Դրանք հին գյուղեր էին, որոնք հիշատակվում են Մաղանջազ, Ալիղուլիշեն, Կյորու անուններով։ Այդ գյուղերում կան բնական քարայրեր, խաչքարերով գերեզմանոցներ, եկեղեցիների ավերակներ, որոնք վկայում են դրանց հին (10-17դդ.) լինելու մասին։ Կառուցվել է հարթավայրում, այստեղից էլ նրա Հարթաշեն անվանումը։
Գյուղատնտեսական գործունեության հիմնական ուղղություններն են՝
- անասնապահությունը,
- դաշտավարությունը։
Հողային և այլ բնական ռեսուրսներ
Հողեր (ընդամենը)՝ 3167 հա, այդ թվում՝
- Գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 2902 հա, որից՝
- վարելահող՝ 776 հա, բազմամյա տնկարկ՝ 7 հա, խոտհարք՝ 47 հա, արոտ՝ 845 հա, այլ հողատեսք՝1227 հա
- բնակավայրերի հողեր՝ 68 հա,
- արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողեր՝ 14 հա
- էներգետիկայի, տրանսպորտի, կապի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր՝4 հա
- հատուկ պահպանվող տարածքների հողեր՝ 70 հա,
- անտառային հողեր՝ 107 հա, որից անտառածածկ՝ 88 հա
- ջրային հողեր՝ 2 հա